# ԱՐՄԱՎԻՐԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ-Ի ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ

# ՀԱՏՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ ՊՈԱԿ

« 26» դեկտեմբերի 2014թ                                        ք. ԱՐՄԱՎԻՐ

**Հարգելի տնօրեն**

«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Արմավիրի **"ՏԻԳՐԱՆ ՄԵԾ "**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ի կարիքների համար համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր **միջև կնքված N ՇՀԱՊՁԲ** շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝ Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին /ք.Արմավիր Աբովյան-149 հասցեով /:

Հայտնում ենք , որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան-149 հասցեով,մինչև 2015 թ. հունվարի 20–ը,ժամը 10:00-ն:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն Ամավիրի **" ՏԻԳՐԱՆ ՄԵԾ "**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ –ի վարչական շենքում ք.Արմավիր Աբովյան-149 հասցեում 2015 թ. հունվարի 20 -ին ժ. 10:00-ին: Հայտը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով,որի վրա կատարվում են գրառումները՝

ա/ **" ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ "** բառերը

բ/ ընթացակարգի ծածկագիրը,

գ/ **" Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը "**

դ/ մասնակցի անվանումը/անունը/,գտնվլու վայրը և հեռախոսահամարը

ե/ պատվիրատուի անվանումը/անունը/,գտնվելու վայրը

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը **/Հավելված 1/** և գնային առաջարկը **/Հավելված 2/**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Առդիր՝ 16 թերթից:

Ստանալու դեպքում խնդրում եմ տեղեկացնել: Էլ.փոստ. gnumnertmv@yandex.ru

**Հարգանքներով ՝ ՏՆՕՐԵՆ՝ ԳՆԴԱՊԵՏ Կ.Լ.ՂՈՒՄԱՇՅԱՆ**

*Հավելված 1*

**«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

**«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով**

**ընթացակարգի գնահատող հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն**

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

____________________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

Արմավիրի **"ՏԻԳՐԱՆ ՄԵԾ "**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ի կողմից **«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15»** ծածկագրով հայտարարված

ընթացակարգի ________________________________ չափաբաժնին /չափաբաժիններին/ և հրավերի
Չափաբաժնի /չափաբաժինների/ համարը

/ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

____________________________________________-ն հայնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1/ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2/ համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

____________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

____________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

____________________________________________:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

____________________________________________ ____________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

________________________________2015 թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված2*

«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

**Գ ն ա յ ի ն   ա ռ ա ջ ա ր կ**

*Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15» ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,*

______________________________________________________________________________-*ն*

Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

**առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝ (ՀՀ դրամ)**

| Չափաբաժիններ համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| **1** | Հաց ցորենի ալյուրից | | | |
| **2** | Շաքարավազ | | | |
| **3** | Ոլոռ | | | |
| **4** | Ոսպ | | | |
| **5** | Բրինձ | | | |
| **6** | Հաճարաձավար | | | |
| **7** | Մակարոն | | | |
| **8** | Ալյուր | | | |
| **9** | Արևածաղիկի ձեթ,ռաֆինացված /զտած/ | | | |
| **10** | Հալած յուղ | | | |
| **11** | Կարագ | | | |
| **12** | Միս տավարի | | | |
| **13** | Հավի միս | | | |
| **14** | Թեյ | | | |
| **15** | Թթվասեր | | | |
| **16** | Տոմատի մածուկ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **17** | Թխվածքաբլիթ | | | |
| **18** | Հավկիթ | | | |
| **19** | Կաղամբ | | | |
| **20** | Կարտոֆիլ | | | |
| **21** | Գազար | | | |
| **22** | Բազուկ | | | |
| **23** | Կանաչի | | | |
| **24** | Սոխ | | | |
| **25** | Խնձոր | | | |
| **26** | Հնդկաձավար | | | |
| **27** | Պանիր | | | |
| **28** | Վարունգ | | | |
| **29** | Լոլիկ | | | |
| **30** | Սմբուկ | | | |
| **31** | Լոբի կանաչ | | | |
| **32** | Կանաչ պղպեղ | | | |
| **33** | Կակաո | | | |
| **34** | Ջեմ | | | |
| **35** | Աղ կերակրի | | | |
| **36** | Խտացրած կաթ | | | |
| **37** | Հյութ | | | |
| **38** | Քացախ | | | |
| **39** | Սխտոր | | | |
| **40** | Մուրաբա | | | |
| **41** | Կաթնաշոռ | | | |
| **42** | Ձուկ | | | |
| **43** | Տավարի մսի պահածո | | | |
| **44** | Սիսեռ | | | |
| **45** | Լոբի | | | |
| **46** | Կոնֆետ շոկոլադապատ | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

**<u>Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:</u>**

---------------------------------------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

---------------------------------------------------
(ստորագրությունը) Կ. Տ.

«_______» _______________ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ**
**«ՏՄՎ-ԱՊՁԲ-01-2/15»**

**ք. Արմավիր** **«-----» ----------------- 2015 թ.**

Արմավիրի **"ՏԻԳՐԱՆ ՄԵԾ "**-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Կ. Ղումաշյանի, որը գործում է վարժարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ____________________________________________ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն ______________________________ _______________ -ի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **Սննդամթերք** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.1.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ կմտնի և պայմանագրի շրջանակներում գնում կկատարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և շարունակվում է մինչև 2015թ-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին՝ ք.Արմավիր Աբովյան -149 հասցեով:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան :

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանադրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սննկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ______________________________ ______________________ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **N 2 հավելվածով**՝ վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման–ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի

հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2014թ.:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած 7 /յոթ/ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված 1

«___» ______________ 201 5թ. կնքված

N ____________________

ապրանքների մատակարարման պայմանագրի

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն Ու Թ Ա Գ Ր Ե Ր Ը

| Չափաբա-ժինների հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Հաց ցորենի ալյուրից | կգ | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 2 | Շաքարավազ | կգ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 3 | Ոլոռ | կգ | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 4 | Ոսպ | կգ | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 5 | Բրինձ | կգ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. |
| 6 | Հաճարաձավար | կգ | Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 7 | Մակարոն | կգ | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 8 | Ալյուր | կգ | 1-ին տեսակի ցորենի ալյուր, ՀՍՏ 280-207: Անվտանգությունը՝ և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 9 | Արևածաղիկի | լ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզման եղանակով, |

| | | | |
|---|---|---|---|
| | ձեթ,ռաֆինացված /զտած/ | | բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 10 | Հալած յուղ | կգ | Յուղ , 100 %-ոց կենդանական, փաթեթավորումը՝ կշռով, ԳՕՍՏ 37-91: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01- 2003 (ՌԴ Սան ՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 11 | Կարագ սերուցքային | կգ | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված |
| 12 | Միս տավարի | կգ | Տավարի կիսամսեղիքով, պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 13 | Հավի միս | կգ | Հավի մսեղիք սառեցրած, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, ԳՕՍՏ 25391- 82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան ՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 14 | Թեյ | կգ | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 15 | Թթվասեր | կգ | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 16 | Տոմատի մածուկ | կգ | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : |
| 17 | Թխվածքաբլիթ | կգ | Կաքնահունից, շաքարահունից և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3-10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20-27%, յուղայնությունը՝ 3-30%: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 18 | Ձու | կգ | Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 19 | Կաղամբ | կգ | Թարմ գլուխ կաղամբ՝ մթերման համար: Թարմ գլուխկաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վնասատուներովվնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահասկաղամբը՝ տարբերաստիճանիփխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները, թույլատրվում է կաղամբի մակերևույթը ամուր չգրկող 2-4 հատ կանաչ տերևների առկայություն: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3-0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստՀՀկառավա-րության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդհոդվածի: |
| 20 | Կարտոֆիլ | կգ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 21 | Գազար | կգ | Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 22 | Բազուկ | կգ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների:<br>Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: |
| 23 | Կանաչի | կգ | Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և ՙՍննդամթերքի անվտանգության մասին՚ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 24 | Սոխ | կգ | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 25 | Խնձոր | կգ | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 26 | Հնդկաձավար | կգ | Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացաhատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 27 | Պանիր ԼՈՌԻ | կգ | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 28 | Վարունգ | հատ | Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 29 | Լոլիկ | կգ | Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 30 | Սմբուկ | կգ | Սմբուկ թարմ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 31 | Լոբի կանաչ | կգ | Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 32 | Կանաչ պղպեղ | կգ | Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 33 | Կակաո | կգ | Խոնավությունը՝ 6,0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակյա թանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված, ԳՕՍՏ 108-76, անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2- 1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 34 | Ջեմ | կգ | տարբեր մրգերից և հատապտուղներիցպատրաստված , բարձր տեսակների ապակե և մետաղյա տարաներով, , անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, ԳՕՍՏ7009-88, ՀՍՏ48-94 |
| 35 | Աղ կերակրի | կգ | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: |
| 36 | Խտացրած կաթ | կգ | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0T-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 37 | Հյութ | լ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Քացախ | Լ | Քացախ խնձորի, պատրաստված թարմ խնձորից, թույլատրվող թթուների զանգվածային մասը՝ 4,0 %, մնացորդային սպիրտի ծավալը 0,3 %: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝"Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 39 | Սխտոր | կգ | Սովորական տեսակի, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 40 | Մուրաբա | կգ | Պատրաստվածտարբերմրգերից,տեղականարտադրության,Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80 %: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 41 | Կաքնաշոռ | կգ | Կաթնաշոռ անյուղ, թթվայնությունը՝ 210-240 °T, փաթեթավորված սպառողական տարաներով, 200-500 գ տուփերով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 42 | Ձուկ | կգ | Ձուկ խորը սառեցված՝ առանց գլխի և փորոտիկի, 1-ին տեսակի, խորը սառեցված բլոկներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածիՁուկ խորը սառեցված՝ առանց գլխի և փորոտիկի, 1-ին տեսակի, խորը սառեցված բլոկներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 43 | Տավարի մսի պահածո | կգ | Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված ,Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 44 | Սիսեռ | կգ | Սիսեռ ԳՕՍT 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 45 | Լոբի | կգ | Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %: |
| 46 | Կոնֆետ շոկոլադապատ | կգ | Պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, ծակոտկեն շոկոլադի դեպքում՝ խոռոչավոր, ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, մանրեցման աստիճանը՝ 92%-ից ոչ պակաս, միջուկի զանգվածային մասը՝ 20%-ից ոչ պակաս Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված 2
«___» _____________ 201 5 թ. կնքված
N __________________
ապրանքների մատակարարման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐ

| Չափա-բաժնի հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակը ըստ եռամսյակի և ամիսների | | | | | | | | | | | | Ընդ. Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | | | |
| | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | X I | X I I | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1 | Հաց ցորենի ալյուրից | կգ | | | | | | | | | | | | | 21465 | | |
| 2 | Շաքարավազ | կգ | | | | | | | | | | | | | 3005 | | |
| 3 | Ոլոռ | կգ | | | | | | | | | | | | | 408 | | |
| 4 | Ոսպ | կգ | | | | | | | | | | | | | 852 | | |
| 5 | Բրինձ | կգ | | | | | | | | | | | | | 780 | | |
| 6 | Համարածավար | կգ | | | | | | | | | | | | | 632 | | |
| 7 | Մակարոն | կգ | | | | | | | | | | | | | 772 | | |
| 8 | Ալյուր | կգ | | | | | | | | | | | | | 150 | | |
| 9 | Արևածաղիկի ձեթ,ռաֆինացված /զտած/ | Լ | | | | | | | | | | | | | 860 | | |
| 10 | Հալած յուղ | կգ | | | | | | | | | | | | | 860 | | |
| 11 | Կարագ սերուցքային | կգ | | | | | | | | | | | | | 2146 | | |
| 12 | Միս տավարի | կգ | | | | | | | | | | | | | 6440 | | |
| 13 | Հավի միս | կգ | | | | | | | | | | | | | 2146 | | |
| 14 | Թեյ | կգ | | | | | | | | | | | | | 7 | | |
| 15 | Թթվասեր | կգ | | | | | | | | | | | | | 215 | | |
| 16 | Տոմատի մածուկ | կգ | | | | | | | | | | | | | 220 | | |
| 17 | Թխվածքաբլիթ | կգ | | | | | | | | | | | | | 1073 | | |
| 18 | Ձու | կգ | | | | | | | | | | | | | 21546 | | |
| 19 | Կաղամբ | կգ | | | | | | | | | | | | | 13992 | | |
| 20 | Կարտոֆիլ | կգ | | | | | | | | | | | | | 17172 | | |
| 21 | Գազար | կգ | | | | | | | | | | | | | 1200 | | |
| 22 | Բազուկ | կգ | | | | | | | | | | | | | 763 | | |
| 23 | Կանաչի | կգ | | | | | | | | | | | | | 425 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | Սոխ | կգ | | | | | | | | | | | | | 1200 | | |
| 25 | Խնձոր | կգ | | | | | | | | | | | | | 6415 | | |
| 26 | Հնդկաձավար | կգ | | | | | | | | | | | | | 752 | | |
| 27 | Պանիր ԼՈՌԻ | կգ | | | | | | | | | | | | | 859 | | |
| 28 | Վարունգ | հատ | | | | | | | | | | | | | 424 | | |
| 29 | Լոլիկ | կգ | | | | | | | | | | | | | 424 | | |
| 30 | Սմբուկ | կգ | | | | | | | | | | | | | 424 | | |
| 31 | Լոբի կանաչ | կգ | | | | | | | | | | | | | 477 | | |
| 32 | Կանաչ պղպեղ | կգ | | | | | | | | | | | | | 424 | | |
| 33 | Կակաո | կգ | | | | | | | | | | | | | 50 | | |
| 34 | Ջեմ | կգ | | | | | | | | | | | | | 360 | | |
| 35 | Աղ կերակրի | կգ | | | | | | | | | | | | | 430 | | |
| 36 | Խտացրած կաթ | կգ | | | | | | | | | | | | | 430 | | |
| 37 | Հյութ | լ | | | | | | | | | | | | | 8586 | | |
| 38 | Քացախ | լ | | | | | | | | | | | | | 150 | | |
| 39 | Սխտոր | կգ | | | | | | | | | | | | | 430 | | |
| 40 | Մուրաբա | կգ | | | | | | | | | | | | | 360 | | |
| 41 | Կաթնաշոռ | կգ | | | | | | | | | | | | | 1500 | | |
| 42 | Ձուկ | կգ | | | | | | | | | | | | | 640 | | |
| 43 | Տավարի մսի պահածո | կգ | | | | | | | | | | | | | 858 | | |
| 44 | Սիսեռ | կգ | | | | | | | | | | | | | 438 | | |
| 45 | Լոբի | կգ | | | | | | | | | | | | | 438 | | |
| 46 | Կոնֆետ շոկոլադապատ | կգ | | | | | | | | | | | | | 354 | | |
| | **Ընդամենը /վճարման ժամանակացույց/** | | | | | | | | | | | | | | | | |

**Ծանոթություն՝ * վճարման ժամանակացույցը ներկայացված է ըստ եռամսյակների՝ ոչ աճողական:**

1. Հաց ցորենի ալյուրից և Կաթնաշոռի մատակարարումը իրականացվում է յուրաքանչյուր օր : Մնացած ապրանքների մատակարարումը իրականացվում է մինչև յուրաքանչյուր ամսվա **5**-ը:

2 Ապրանքների բեռնումը, տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է Վաճառողի տրանսպորտային միջոցներով և բանվորական ուժով:

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

Հավելված 3
«___» _____________ 2015 թ. կնքված
N ___________________
ապրանքների մատակարարման պայմանագրի

| **Գնորդ** | **Վաճառողը** |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հասցե______________________ | հասցե______________________ |
| հհ______________________ | հհ______________________ |
| հվհհ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ___ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_________» 2015 թ.

Պայմանագրի անվանումը՝ ***«Ապրանքների»*** մատակարարման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «__________________________» 2015 թ.
Պայմանագրի համարը՝ _______________________________________________
Գնորդն՝ ի դեմս ___________________________________ և Վաճառողը՝ ի դեմս _____________ ____________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___ » «___________________» 2015թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական հատկանիշին և գնման պայմանին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «________» «_______________» 2015թ–ից «_______» «________ _______» 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

| Մատակարարման համառոտ նկարագիրը | Մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարարումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ մատակարարված Ապրանքների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ապրանքը հանձնեց** | **Ապրանքը ընդունեց** |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ազգանուն ______________ | ազգանուն ______________ |
| Կ Տ | Կ Տ |